## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

*24. 09. 2021* *Ք. Իջևան*

Մասնակցում էին գիտխորհրդի 24 անդամներից 20-ը.

## ՕՐԱԿԱՐԳ

1. Ամբիոնների 2021-2022 ուստարվա աշխատանքային պլանների հաստատման մասին: / Զեկուցող՝ Կ. Պողոսյան/
2. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2021-2022 ուստարվա I կիսամյակի աշխատանքային պլանի քննարկման և հաստատման մասին: / Զեկուցող՝ Կ. Պողոսյան/
3. Ամբիոններում 2021-2022 ուստարվա առարկայական փաթեթների առկայության մասին: /Զեկուցող՝ ամբիոնի վարիչներ/
4. Ընթացիկ հարցեր:

***ԼՍԵՑԻՆ.***

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը արձանագրեց, որ կիսամյակի կտրվածքով ամբիոնների աշխատանքային գործունեության պլանավորման անհրաժեշտությունը դարձել է կարևոր խնդիր: Համավարակի և հեռավար ուսուցման պայմաններում դա առավել ևս կդյուրացնի ամբիոնների աշխատանքների կանոնակարգումը և վերահսկողությունը: Ամբիոնների աշխատանքային պլանները քննարկվել են ամբիոնային նիստերում:

***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.***

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը:

***ՈՐՈՇԵՑԻՆ.***

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի կառուցվածքում գործող Հայոց պատմության և հասարակագիտության, Հայոց լեզվի և գրականության, Մանկավարժության և հոգեբանության, Օտար լեզուների ամբիոնի 2021-2022 ուստարվա աշխատանքային պլանները:

*ԼՍԵՑԻՆ.*

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը նշեց, որ համավարակի պայմաններում ֆակուլտետի 2021-2022 ուստարվա ուսումնական գործունեությունը կազմակերպված և նպատակային վարելու առումով աշխատանքային պլանում կատարվել են որոշակի փոփոխություններ: Այս փոփոխությունները թույլ են տալիս ֆակուլտետի գործունեությունը դարձնել առավել ճկուն և արդյունավետ: Զեկուցողը հայտնեց, որ աշխատանքային պլանը նախապես քննարկվել է դեկանատի նիստում:

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.*

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը:

*ՈՐՈՇԵՑԻՆ.*

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանը:

*ԼՍԵՑԻՆ.*

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնի վարիչները: Նրանք նշեցին, որ ամբիոններում առարկայական փաթեթները հիմնականում առկա են: Ընթացքի մեջ են այն փաթեթները, որոնց ուսումնական պլաններում փոփոխություններ են տեղի ունեցել: Բացի այդ՝ կան նաև կամընտրական առարկաներ, որոնք դասավանդվում են վերջին տարին և այդ առարկաների համար գրվել են առարկայական ծրագրեր:

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.*

*Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ, դոցենտ Լ. Թումանյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը:*

*ՈՐՈՇԵՑԻՆ.*

*Ամբիոններում առարկայական փաթեթների վիճակը համարել բավարար:*

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Կ. Պողոսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Վ. Աղաբաբյան